ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն – Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը – ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները – Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն, 2018 թվականի դեկտեմբերի 10-12

4.Հրավիրող կողմը – Իրանի Իսլամական Հանրապետության առողջապահության և բժշկական կրթության նախարարություն

5. Գործուղման նպատակը – Մասնակցություն հայ-իրանական համատեղ աշխատանքային խմբի նիստին

6. Քննարկված թեմաները

Այցի շրջանակում հանդիպումներ եղան Իրանի Իսլամական Հանրապետության առողջապահության տարբեր ոլորտներ համակարգող առողջապահության նախարարի չորս տեղակալների հետ, որոնցից մեկը նաև սննդի և դեղերի կազմակերպության ղեկավարն է: Հանդիպում կայացավ նաև բժշկական սարքավորումների գծով նախարարի խորհրդականի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին հանրային առողջության, բուժքույրական գործի, առողջապահական համակարգի ֆինանսավորման, բժշկական ծառայությունների կազմակերպման, ծառայությունների տրամադրման, դեղերի շրջանառության, դեղագործական արտադրանք, բժշկական սարքավորումների գրանցման և ներմուծման, մասնագետների փորձի ու գիտելիքների փոխանակման այլ ուղղություններով համագործակցության խորացման հնարավորությունը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցեր եղան Թեհրանի առաջատար դեղագործարան և սրտաբանական կենտրոն, ներկայացվեցին վերջինների գործունեությունն ու դրական փորձը՝ հետագայում Հայաստանում կիրառելու և ներդնելու տեսանկյունից:

Հանդիպումների ընթացքում ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանը: Ներկայացվեցին Հայաստանում առողջապահության բնագավառի զարգացման ուղղությունները և առաջնահերթությունները, հատկապես շեշտադրություն անելով նաև իրանական կողմին հետաքրքրող դեղերի գնումների գործընթացի, դեղորայքի և բժշկական սարքավորումների գրանցման առանձնահատկություններին:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Այցի ընթացքում հայ-իրանական համատեղ աշխատանքային խմբի իրանական կողմի ղեկավարի՝ ԻԻՀ միջազգային հարաբերությունները համակարգող նախարարի տեղակալի հետ ստորագրվեց հանդիպման արձանագրություն՝ որտեղ արծարծված են կողմերի պայմանավորվածությունները և հետագա համատեղ գործունեության ժամանակացույցը:

9. Առաջարկությունները

Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին երկկողմ համագործակցության զարգացման հետագա ուղղությունների և հեռանկարների վերաբերյալ:

10. Գործուղվողները

Անահիտ Ավանեսյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Նելլի Մելիք-Շահնազարյան - ՀՀ առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության միջազգային համագործակցության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ

Լիանա Բարսեղյան - ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության հիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

11. Ստորագրությունը, ամսաթիվը

2018թ. դեկտեմբերի 14